



Համարը N 1872-Ն

Տիպը Որոշում

Սկզբնաղբյուրը Միասնական կայք 2022.11.28-

2022.12.11 Պաշտոնական

հրապարակման օրը 06.12.2022

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն

Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ

Վավերացնող մարմինը

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 07.12.2022

Տեսակը Հիմնական

Կարգավիճակը Գործում է

Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 01.12.2022

Ստորագրման ամսաթիվը 06.12.2022

Վավերացման ամսաթիվը

Ուժը կորցնելու ամսաթիվը

Գապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԵԱՏՄ ԱՆԴԱՄ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱԿՈՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ (ՆԵՐՄՈՒԾՎԱԾ), ՀՀ-ՈՒՄ ԱՐՏԱԴՐՎԱԾ, ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՐՎՈՂ ԱՆՎԱԿՈՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ԱՆՎԱԿՈՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՏԻՊԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԱՄՐԱՇՐՋԱՆԱԿԻ ՏԻՊԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԵԶԱԿԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 դեկտեմբերի 2022 թվականի N 1872-Ն

ԵԱՏՄ ԱՆԴԱՄ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱԿՈՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ (ՆԵՐՄՈՒԾՎԱԾ), ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎԱԾ, ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՐՎՈՂ ԱՆՎԱԿՈՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ԱՆՎԱԿՈՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՏԻՊԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԱՄՐԱՇՐՋԱՆԱԿԻ ՏԻՊԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԵԶԱԿԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը և ԵՏՀ խորհրդի 2022 թվականի օգոստոսի 19-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 877 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 120 որոշումը` Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել`

1) ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետությունների անվավոր տրանսպորտային միջոցներ արտադրողների պաշտոնական ներկայացուցիչների կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող (ներմուծված), Հայաստանի Հանրապետությունում արտադրված, Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ դրվող անվավոր տրանսպորտային միջոցներին (այսուհետ` տրանսպորտային միջոց) ներկայացվող պահանջները և դրանց համապատասխանության գնահատման կանոնները (այսուհետ` կանոններ)` համաձայն N 1 հավելվածի.

2) տրանսպորտային միջոցի տիպի գնահատման մասին եզրակացության ձևը` համաձայն N 2 հավելվածի.

3) տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի տիպի գնահատման մասին եզրակացության ձևը` համաձայն N 3

հավելվածի.

4) Էզակի տրանսպորտային միջոցի գնահատման մասին եզրակացության ձևը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի համարների կառուցվածքը՝ համաձայն N 5 հավելվածի:

2. Մինչև ԵՏՀ խորհրդի 2022 թվականի օգոստոսի 19-ի N 120 որոշման գործողության ժամկետի ավարտը թույլատրելի սույն որոշմամբ հաստատված համապատասխանության գնահատման կանոնների իրականացումը և դրանց հիման վրա ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետությունների անվավոր տրանսպորտային միջոցներ արտադրողների պաշտոնական ներկայացուցիչների կողմից տրանսպորտային միջոցների Հայաստանի Հանրապետություն ներմուծումը:

3. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում ապահովել սույն որոշման համաձայն ներմուծված տրանսպորտային միջոցների ռեեստրի ձևավորումն ու վարումը:

4. Քաղաքաշինության և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարին՝ ապահովել սույն որոշման համաձայն Հայաստանի Հանրապետություն ներմուծված (ներմուծվող), Հայաստանի Հանրապետությունում արտադրված, Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ գտնվող տրանսպորտային միջոցների նկատմամբ պետական վերահսկողություն:

5. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին՝ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ արգելելով սույն որոշման համաձայն ներմուծված տրանսպորտային միջոցների պետական գրանցումն առանց գնահատման մասին եզրակացության:

6. Տրանսպորտային միջոցները (ամրաշրջանակ), որոնք արտադրված են Ռուսաստանի Դաշնությունում՝ իր ազգային օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ համաձայն ԵՏՀ խորհրդի 2022 թվականի ապրիլի 5-ի N 45 որոշման, կարող են ներմուծվել և շրջանառվել Հայաստանի Հանրապետության տարածքում:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2022 թվականի ապրիլի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ն. Փաշինյան

Երևան

06.12.2022

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ

ՍՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 1

**ՀՀ կառավարության 2022 թվականի
դեկտեմբերի 1-ի N 1872-Ն որոշման**

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

**ԵԱՏՄ ԱՆԴԱՄ ԶՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՎՈՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ
ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ (ՆԵՐՄՈՒԾՎԱԾ), ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՐՏԱԴՐՎԱԾ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՐՎՈՂ
ԱՆՎԱՎՈՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ
ՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնները կիրառելի են ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող (ներմուծված), Հայաստանի Հանրապետությունում արտադրված, Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ դրվող M1, M1G կատեգորիաների տրանսպորտային միջոցների նկատմամբ:

2. Սույն կանոնները կիրառելի չեն Հայաստանի Հանրապետությունում շահագործվող և շրջանառության մեջ գտնվող տրանսպորտային միջոցների նկատմամբ:

3. Սույն որոշման շրջանակներում օգտագործվող հասկացություններն են՝

1) **արտադրանքի սերտիֆիկացման մարմին** - Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված

կարգով հավատարմագրված, ԵԱՏՄ համապատասխանության գնահատման մարմինների միասնական ռեեստրի ազգային մասում ներառված, նշանակված արտադրանքի սերտիֆիկացման մարմին, ում հավատարմագրման և նշանակման ոլորտում առկա է «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը.

2) **փորձարկման լաբորատորիա** - Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված, ԵԱՏՄ համապատասխանության գնահատման մարմինների միասնական ռեեստրի ազգային մասում ներառված, նշանակված փորձարկման լաբորատորիա, ում հավատարմագրման և նշանակման ոլորտում առկա է «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը.

3) **Եզակի տրանսպորտային միջոց**- սերիական արտադրության պայմաններում արտադրված անվավոր տրանսպորտային միջոց, որի կառուցվածքի մեջ, նախքան շրջանառության մեջ բաց թողնելը, անհատական կարգով կատարվել են փոփոխություններ, կամ սերիական արտադրությունից դուրս՝ անհատական կարգով, հավաքովի լրակազմից, կամ անհատական տեխնիկական ստեղծագործության արդյունք հանդիսացող, կամ պետական պաշտպանության պատվերով ավելի վաղ մատակարարվածների թվից շրջանառության մեջ բաց թողնվող, ինչպես նաև անվավոր տրանսպորտային միջոցներ արտադրողների պաշտոնական ներկայացուցիչների կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող տրանսպորտային միջոցներ.

4) **հայտատու**- Հայաստանի Հանրապետության տարածքում օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված՝ ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետության անվավոր տրանսպորտային միջոցներ արտադրողի պաշտոնական ներկայացուցիչ, որը համապատասխանության հավաստման նպատակով դիմում է համապատասխանության գնահատման մարմնին.

5) **գնահատման մասին եզրակացություն**- շրջանառության մեջ դրվող տրանսպորտային միջոցի կամ ամրաշրջանակի կամ եզակի տրանսպորտային միջոցի՝ սույն հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանությունը հավաստող, տրանսպորտային միջոցի տիպի կամ ամրաշրջանակի կամ եզակի տրանսպորտային միջոցի գնահատման արդյունքում տրվող եզրակացություն, որը հանդիսանում է համապատասխանության գնահատման փաստաթուղթ.

6) **արտադրող** - M1, M1G կատեգորիաների տրանսպորտային միջոցներ արտադրող իրավաբանական անձ.

7) **տրանսպորտային միջոց**- «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի և սույն որոշման կարգավորման օբյեկտ հանդիսացող, սույն կանոններով սահմանված համապատասխանության գնահատում անցած M1, M1G կատեգորիաների անվավոր տրանսպորտային միջոց.

8) **տրանսպորտային միջոցների ռեեստր**- սույն կանոններով սահմանված համապատասխանության գնահատում անցած տրանսպորտային միջոցների կամ ամրաշրջանակի կամ եզակի տրանսպորտային միջոցների ռեեստր:

4. Սույն կանոններին համապատասխան համապատասխանության գնահատում անցած տրանսպորտային միջոցները պետք է համապատասխանեն «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին (բացառությամբ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի V գլխի և N 2 հավելվածի աղյուսակի 113-րդ, 114-րդ կետերի, N 3 հավելվածի 16-րդ, 17-րդ կետերի):

5. Սույն կանոններին համապատասխան ներմուծված տրանսպորտային միջոցի կամ տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի՝ ցանկում (Ձև N 1) նշված տեխնիկական պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքում համապատասխանության գնահատման մարմնի կողմից հայտատուին տրամադրվում է սույն որոշման NN 2, 3 հավելվածներով սահմանված ձևերին համապատասխան տրանսպորտային միջոցի տիպի կամ ամրաշրջանակի գնահատման մասին եզրակացություն: Սույն կանոններին համապատասխան ներմուծված եզակի տրանսպորտային միջոցի՝ ցանկում (Ձև N 2) նշված տեխնիկական պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքում համապատասխանության գնահատման մարմնի կողմից հայտատուին տրամադրվում է սույն որոշման N 4 հավելվածով սահմանված ձևին համապատասխան եզակի տրանսպորտային միջոցի գնահատման մասին եզրակացություն:

6. Սույն հավելվածի 5-րդ կետով սահմանված տրանսպորտային միջոցի տիպի կամ ամրաշրջանակի կամ եզակի տրանսպորտային միջոցի գնահատման մասին եզրակացության համապատասխան դաշտում (սյունակում) արտադրանքի հավատարմագրված սերտիֆիկացման մարմնի կամ փորձարկման լաբորատորիայի կողմից պետք է լրացվի տրամադրման համար անհրաժեշտ արտակարգ օպերատիվ ծառայությունների կանչի սարքավորումով (համակարգով) համարված լինելու կամ դրա բացակայության մասին տեղեկատվություն:

7. «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխան համապատասխանության գնահատում անցած տրանսպորտային միջոցների համար սույն կանոններին համապատասխան համապատասխանության գնահատում չի պահանջվում:

8. Տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի կամ եզակի տրանսպորտային միջոցի գնահատման մասին եզրակացությունը համապատասխանության գնահատման մարմնի կողմից ձևակերպվում է թղթային կամ էլեկտրոնային ձևով՝ տրամադրելով համարներ սույն կանոններին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի

համարակալման կառուցվածքին համապատասխան՝ համաձայն N 5 հավելվածի:

9. Տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի կամ եզակի տրանսպորտային միջոցի գնահատման մասին եզրակացության ռեեստրների ձևավորումը, վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտացման և չափազիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության կողմից:

10. Տրանսպորտային միջոցի, ամրաշրջանակի տիպի համապատասխանությունը տեխնիկական պահանջներին հավաստող փաստաթղթերն են

1) տիպի պաշտոնական հաստատման մասին հաղորդագրություն՝ տրված 1958 թվականի մարտի 20-ի Ժնևում կնքված «Անվավոր տրանսպորտային միջոցների, անվավոր տրանսպորտային միջոցների վրա տեղադրվող և (կամ) օգտագործվող սարքավորումների առարկաների և մասերի համար միատեսակ տեխնիկական կարգադրագրերի ընդունման և այդ կարգադրագրերի հիման վրա տրվող պաշտոնական հաստատումների փոխադարձ ճանաչման պայմանների մասին» համաձայնագրի մասնակից երկրների վարչական մարմինների կողմից, ինչպես նաև դրանց կից արձանագրությունները:

2) համապատասխանության սերտիֆիկատները՝ տրված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի շրջանակներում և դրանց կից արձանագրությունները:

3) փորձարկման արձանագրությունները հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի կամ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված դեպքերի, արտադրողի կողմից կատարված փորձարկումներով (թույլատրվում է փորձարկումների կատարումն արտադրողի սարքավորման վրա կամ սերտիֆիկացման մարմնի ներկայացուցչի մասնակցությամբ, ներառյալ հեռավար եղանակով կամ տեսաձայնագրման ընթացակարգով, ընդ որում ձայնագրությունն ուղարկվում է սերտիֆիկացնող մարմնին փորձարկումների արձանագրության պատրաստման համար):

4) համապատասխանության մասին հայտարարագրերը՝ գրանցված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի դրույթներին համապատասխան:

11| Տրանսպորտային միջոցների այն բաղադրիչների համար, որոնց համապատասխանության գնահատումն իրականացվում է ՄՄԿ-ի կանոնների պահանջներով, համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն են տիպի պաշտոնական հաստատման մասին հաղորդագրությունները, համապատասխանության սերտիֆիկատները՝ տրամադրված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի շրջանակներում:

II. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՏԻՊԻ ԵՎ ԱՄՐԱՇՐՋԱՆԱԿԻ ՏԻՊԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

12. Տրանսպորտային միջոցի տիպի և ամրաշրջանակի տիպի համապատասխանության գնահատումն անցկացվում է արտադրանքի սերտիֆիկացման մարմնի կողմից հետևյալ կարգով՝

1) հայտատուի կողմից հայտի ներկայացում արտադրանքի սերտիֆիկացման մարմին, որում նշվում են հայտատուի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը/համարները, էլեկտրոնային փոստի հասցեն, բանկային ռեկվիզիտները, տրանսպորտային միջոցի տիպը և ամրաշրջանակի տիպը՝ ավելի վաղ տրամադրված տրանսպորտային միջոցի տիպի և ամրաշրջանակի տիպի հաստատումների մասին տվյալները՝ կցելով «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի N 12 հավելվածի 1-ին և 2-րդ բաժիններում նշված փաստաթղթերը:

13| Արտադրանքի սերտիֆիկացման մարմինը՝

1) սույն հավելվածի 12-րդ կետի 1-ին ենթակետում նշված հայտի ստացման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է դրանք և կայացնում նախնական որոշում:

2) հայտատուի հետ աշխատանքների կատարման պայմանագիր է կնքում, որում ներառվում է նաև տրանսպորտային միջոցների նմուշների տրամադրման մասին տեղեկատվությունը:

3) անցկացնում է տրանսպորտային միջոցների նույնականացում, նմուշների ընտրություն փորձարկումների համար, վաղ անցկացրած փորձարկումների արդյունքների վերլուծություն:

4) իրականացնում է կատարված աշխատանքների արդյունքներով ստացված փաստաթղթերի վերլուծություն:

5) պատրաստում է որոշում տրանսպորտային միջոցի տիպի և ամրաշրջանակի տիպի համապատասխանության մասին եզրակացության ձևակերպման հնարավորության մասին:

6) ձևակերպում է տրանսպորտային միջոցի տիպի և ամրաշրջանակի տիպի համապատասխանության մասին եզրակացությունները՝ համաձայն NN 2 և 3 հավելվածների ձևերի, տրամադրում է գրանցման համար՝ համաձայն N 5 հավելվածի:

7) «Ստանդարտացման և չափազիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության հաստատմանն է ուղարկում տրանսպորտային միջոցի տիպի և ամրաշրջանակի տիպի եզրակացությունները:

8) տեխնիկական պահանջների կատարման ստուգմանը վերաբերող փաստաթղթերը պահում է առնվազն 5 տարի:

14. Հավաստարմագրված փորձարկման լաբորատորիան՝

1) հայտատուի հետ կնքում է փորձարկումների անցկացման աշխատանքների կատարման պայմանագիր.

2) փորձարկումների ավարտից հետո փորձարկման արձանագրությունները կազմվում են և տրամադրվում են հայտատուին պայմանագրով կամ պայմանագրի հավելվածով նախատեսված և համաձայնեցված ժամկետներում: Արձանագրության հետ միասին հայտատուին վերադարձվում է վավերացված տեխնիկական նկարագիրը, ինչը հանդիսանում է փորձարկման արձանագրության հավելված:

15I «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերությունը տրանսպորտային միջոցի տիպի և ամրաշրջանակի տիպի եզրակացություններն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում՝

1) հաստատում է տվյալ եզրակացությունները և դրանք վերադարձնում սերտիֆիկացման մարմնին.

2) դիտողությունների առկայության դեպքում տվյալ եզրակացությունները լրամշակման է ուղարկում արտադրանքի սերտիֆիկացման մարմնին:

16I Տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի տիպի եզրակացությունների գործողության ժամկետը մեկ տարի է:

17I Տրանսպորտային միջոցների (ամրաշրջանակի) փոքր խմբաքանակի համար ձևակերպված տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի տիպի եզրակացություններում ներառվում են տրանսպորտային միջոցների (ամրաշրջանակի) նույնականացման համարները:

18. Փոքր խմբաքանակում ներառված տրանսպորտային միջոցների (ամրաշրջանակի) նույնականացման հնարավորության բացակայության դեպքում այդ փոքր խմբաքանակի համար ձևակերպված տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի տիպի եզրակացությունները հայտատուին չեն տրվում և պահպանվում են արտադրանքի սերտիֆիկացման մարմնում, որը վարում է տրանսպորտային միջոցների (ամրաշրջանակի) քանակի հաշվառումը և հայտատուի դիմումի հիման վրա տալիս է այդ հաստատված եզրակացությունների պատճենները, որոնցում նշված են տրանսպորտային միջոցների (ամրաշրջանակի) նույնականացման համարները:

19. Տրանսպորտային միջոցների (ամրաշրջանակի) փոքր խմբաքանակի համար ձևակերպված տրանսպորտային միջոցների տիպի, ամրաշրջանակի տիպի եզրակացությունների գործողությունը տարածվում է միայն այդ խմբաքանակում ներառված տրանսպորտային միջոցների (ամրաշրջանակի) վրա:

20I Բազային տրանսպորտային միջոցների (ամրաշրջանակի) օգտագործմամբ արտադրված՝ տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի տիպի եզրակացություն և հաստատում ունեցող տրանսպորտային միջոցների տիպի համապատասխանության գնահատման ժամանակ տեխնիկական պահանջներին համապատասխանության հավաստումը կատարվում է բազային տրանսպորտային միջոց (ամրաշրջանակ) արտադրողի թույլտվության ներկայացման դեպքում՝ նշելով տեխնիկական պահանջները, որոնց համապատասխանությունն ապահովվում է բազային տրանսպորտային միջոցի (ամրաշրջանակի) արտադրողի կողմից: Այդպիսի տեխնիկական պահանջների համար հավաստման փաստաթղթերն են բազային տրանսպորտային միջոցի (ամրաշրջանակի) տրված տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի տիպի եզրակացությունները և հաստատումները:

21. 20-րդ կետում նշված թույլտվությունների բացակայության դեպքում սերտիֆիկացման մարմինը հետագոտում է բազային տրանսպորտային միջոցների (ամրաշրջանակի) տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի տիպի եզրակացությունների և հաստատումների ձևակերպման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը՝ որոշելու համար բազային տրանսպորտային միջոցների (ամրաշրջանակի) կառուցվածքում կատարված փոփոխությունների և լրացումների ազդեցությունը՝ տեխնիկական պահանջներին համապատասխան: Յուրաքանչյուր տեխնիկական պահանջի համար փորձարկման արդյունքներով փորձարկման լաբորատորիան ձևակերպում է փորձարկման արձանագրություն, որը տրանսպորտային միջոցի տիպի գնահատման մասին եզրակացության ձևակերպման ժամանակ փաստաթղթային հավաստում է հանդիսանում:

22. Սերտիֆիկացման մարմնին իրականացնում է հսկողություն այն տրանսպորտային միջոցների տեխնիկական պահանջների համապատասխանության նկատմամբ, որոնց համար անցկացվել է համապատասխանության գնահատում սույն կանոնների պահանջներին համապատասխան և «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՍ ՏԿ 018/2011 Սաքային միության տեխնիկական կանոնակարգի V բաժնին համապատասխան:

23. Տրանսպորտային միջոցի տիպի կամ ամրաշրջանակի տիպի գնահատման մասին եզրակացություններում անձշտություններ հայտնաբերելու դեպքում սերտիֆիկացման մարմինն ուղղումներ է կատարում և սույն կանոնների 13-րդ կետով նախատեսված կարգով ուղարկում է «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության հաստատմանը:

III. ԵԶԱԿԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

24I Եզակի տրանսպորտային միջոցների տեխնիկական պահանջների կատարման ստուգումը կատարվում է նախքան դրանց շրջանառության մեջ դրվելը փորձարկման լաբորատորիայի կողմից եզակի տրանսպորտային միջոցի կառուցվածքի տեխնիկական փորձարկման (փորձաքննության) ձևով՝ առկա կամ հեռավար միջոցների կիրառմամբ՝ կախված հայտատուի կողմից տրամադրած ապացուցողական նյութերից: Համապատասխանության գնահատմանը

ենթարկվում են միայն լրակազմ եզակի տրանսպորտային միջոցները: Եթե եզակի տրանսպորտային միջոցն այն տիպին է վերաբերում, որին տրված է տրանսպորտային միջոցի տիպի հաստատում, ապա տրանսպորտային միջոցի գնահատման մասին եզրակացությունը ձևակերպվում է այդ հաստատման հիման վրա:

25. Եզակի տրանսպորտային միջոցի համապատասխանության գնահատումն անցկացվում է հետևյալ կարգով՝

1) հայտատուի կողմից փորձարկման լաբորատորիային է ներկայացվում հայտ, որում նշվում են հայտատուի անվանումը, գտնվելու վայրի հասցեն, հեռախոսի համարները, էլեկտրոնային փոստի հասցեն, բանկային ռեկվիզիտները, տրանսպորտային միջոցի տիպը՝ ավելի վաղ տրամադրված տրանսպորտային միջոցների տիպի, ամրաշրջանակի տիպի հաստատումների մասին տվյալները՝ կցելով «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի N 12 հավելվածի 3-րդ բաժնում նշված փաստաթղթերը (առկայության դեպքում)։

2) հավատարմագրված փորձարկման լաբորատորիան՝

ա. հայտի և անհրաժեշտ փաստաթղթերի ստացման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշում է ընդունում համապատասխանության գնահատման աշխատանքների կատարման պայմանագիր կնքելու մասին ներառյալ եզակի տրանսպորտային միջոցի նմուշի ներկայացման մասին տեղեկատվությունը,

բ. իրականացնում է եզակի տրանսպորտային միջոցի նայնականացում (այդ թվում՝ հեռավար միջոցների կիրառմամբ),

գ. իրականացնում է «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի N 4 հավելվածի 1-4-րդ բաժիններում նախատեսված (այդ թվում՝ կառուցվածքի տեխնիկական փորձարկում (փորձաքննություն)՝ հեռավար) պահանջների կատարման գնահատում: Այն դեպքում, երբ սերիական արտադրության պայմաններում տրանսպորտային միջոցի կառուցվածքում անհատական կարգով կատարվել են ներքին այրման շարժիչի համակարգին չառնչվող փոփոխություններ, ապա «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի N 4 հավելվածի 4-րդ բաժնի պահանջների կատարման գնահատում չի իրականացվում, ինչպես նաև չի գնահատվում հակաբլոկային արգելակման համակարգի (հատուկ և մասնագիտացված տրանսպորտային միջոցների նկատմամբ լրացուցիչ գնահատում են «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի N 6 հավելվածով նախատեսված պահանջների կատարումը) առկայությունը,

դ. պատրաստում է եզակի տրանսպորտային միջոցի կառուցվածքի տեխնիկական փորձարկման արձանագրությունը,

ե. ձևակերպում է եզակի տրանսպորտային միջոցի գնահատման մասին եզրակացություն՝ համաձայն N 4 հավելվածի, տրամադրում է գրանցման համար՝ համաձայն N 5 հավելվածի և տրված եզրակացության պատճենն ուղարկում «Մտանդարտացման և չափազիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերություն,

զ. տեխնիկական պահանջների կատարման ստուգմանը վերաբերող փաստաթղթերը պահում է առնվազն 5 տարի:

Ձև N 1

ՑԱՆԿ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԿԱՍ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԱՄՐԱՇՐՋԱՆԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ

NN ը/կ	Տեխնիկական պահանջները կամ կանոնակարգման օբյեկտները	Փաստաթղթեր, որոնցում ներառված են տեխնիկական պահանջները
1.	Մոտարձակ և հեռարձակ լույսի ցուլապատերներ	ՄԱԿ-ի թիվ 1-02 կանոններ
2.	Լուսանդրադարձիչներ	ՄԱԿ-ի թիվ 3-02 կանոններ
3.	Սարքվածքներ՝ գրանցման հետևի համարանիշի լուսավորման համար	ՄԱԿ-ի թիվ 4-00 կանոններ
4.	Շրջադարձի ցուցիչներ	ՄԱԿ-ի թիվ 6-01 կանոններ
5.	Եզրաչափքային լույսեր, արգելակման ազդանշաններ	ՄԱԿ-ի թիվ 7-02 կանոններ
6.	Մոտարձակ և հեռարձակ լույս ցուլապատերներ	ՄԱԿ-ի թիվ 8-05 կանոններ
7.	Էլեկտրամագնիսական ճառագայթման արտաքին աղբյուրների ազդեցության նկատմամբ կայունությունը և էլեկտրամագնիսական համատեղելիությունը	ՄԱԿ-ի թիվ 10-03 կանոններ
8.	Դռների կողպեքներ և ծխնիներ	ՄԱԿ-ի թիվ 11-02 կանոններ ՄԱԿ-ի թիվ 11-03 կանոններ

9.	Ղեկային կառավարման տրավմաներից ապահովությունը	ՄԱԿ-ի թիվ 12-03 կանոններ
10.	Արգելակային համակարգերի արդյունավետություն	ՄԱԿ-ի թիվ 13-Մ կանոններ
11.	Անվտանգության ամրագրություններն ամրացնելու տեղը	ՄԱԿ-ի թիվ 14-07 կանոններ
12.	Տրանսպորտային միջոցների՝ պահող համակարգերով համալրում	ՄԱԿ-ի թիվ 16-06 կանոններ
13.	Նստատեղերի և դրանց ամրակների ամրությունը	ՄԱԿ-ի թիվ 17-08 կանոններ
14.	Չարտոնված օգտագործումից տրանսպորտային միջոցների պաշտպանությունը	ՄԱԿ-ի թիվ 18-02 կանոններ
15.	Առջևի հակամառախուղային ցոլալապտերներ	ՄԱԿ-ի թիվ 19-03 կանոններ
16.	Մոտարձակ և հեռարձակ լույսի ցոլալապտերներ	ՄԱԿ-ի թիվ 20-03 կանոններ
17.	Հետընթացի լապտերներ	ՄԱԿ-ի թիվ 23-00 կանոններ
18.	Արտանետումներ	ՄԱԿ-ի թիվ 24-03 կանոններ
19.	Նստելատեղերի գլխակալներ	ՄԱԿ-ի թիվ 25-04 կանոններ
20.	Արտաքին ելուների վնասվածքաանվտանգությունը	ՄԱԿ-ի թիվ 26-03 կանոններ
21.	Զայնային ազդանշանային սարքերով համալրում	ՄԱԿ-ի թիվ 28-00 կանոններ
22.	Դողերով համալրում	ՄԱԿ-ի թիվ 30-02 կանոններ
23.	Հրդեհային անվտանգություն	ՄԱԿ-ի թիվ 34-02 կանոններ
24.	Հետևի հակամառախուղային լույսեր	ՄԱԿ-ի թիվ 38-00 կանոններ
25.	Արագության չափման մեխանիզմներ	ՄԱԿ-ի թիվ 39-00 կանոններ
26.	Անվտանգ ապակիներով համալրում	ՄԱԿ-ի թիվ 43-00 կանոններ
27.	Անուղղակի տեսադաշտի սարքվածքներով համալրում	ՄԱԿ-ի թիվ 46-02 կանոններ
28.	Լուսավորման և լուսային ազդանշանային սարքվածքներով համալրում	ՄԱԿ-ի թիվ 48-03 կանոններ, ՄԱԿ-ի թիվ 48-04 կանոններ
29.	Արտանետումներ	ՄԱԿ-ի թիվ 49-05 կանոններ
30.	Արտաքին ադմուկ	ՄԱԿ-ի թիվ 51-02 կանոններ
31.	Դողերով համալրում	ՄԱԿ-ի թիվ 54-00 կանոններ
32.	Կցորդման սարքվածքներով համալրում	ՄԱԿ-ի թիվ 55-01 կանոններ
33.	Նախագուշացնող հատուկ լույսեր	ՄԱԿ-ի թիվ 65-00 կանոններ
34.	Հեղուկացված նավթային գազով տրանսպորտային միջոցներ և սնման համակարգեր	ՄԱԿ-ի թիվ 67-01 կանոններ
35.	Կայանման լույսեր	ՄԱԿ-ի թիվ 77-00 կանոններ
36.	Ղեկային կառավարում	ՄԱԿ-ի թիվ 79-01 կանոններ
37.	Արտանետումներ	ՄԱԿ-ի թիվ 83-05 կանոններ, ՄԱԿ-ի թիվ 83-06 կանոններ,
38.	Առավելագույն արագության սահմանափակման սարքվածքներով համալրում	ՄԱԿ-ի թիվ 89-00 կանոններ
39.	Արտանետումներ	ՄԱԿ-ի թիվ 96-02 կանոններ
40.	Մոտարձակ և հեռարձակ լույսի ցոլալապտերներ	ՄԱԿ-ի թիվ 98-00 կանոններ
41.	Էլեկտրաշարժաբեքով տրանսպորտային միջոցների անվտանգությունը	ՄԱԿ-ի թիվ 100-01 կանոններ
42.	Ուղևորատար տրանսպորտային միջոցներին ներկայացվող անվտանգության ընդհանուր պահանջները	ՄԱԿ-ի թիվ 107-03 կանոններ
43.	Մեղմված բնական գազով տրանսպորտային միջոցներ և սնման համակարգեր	ՄԱԿ-ի թիվ 110-00 կանոններ
44.	Մոտարձակ և հեռարձակ լույսի ցոլալապտերներ	ՄԱԿ-ի թիվ 112-00 կանոններ
45.	Չարտոնված օգտագործումից տրանսպորտային միջոցների պաշտպանությունը	ՄԱԿ-ի թիվ 116-00 կանոններ
46.	Անկյունային լապտերներ	ՄԱԿ-ի թիվ 119-00 կանոններ

47.	Ներքին աղմուկ	ԳՕՍՍ 33555-2015
48.	Օդափոխություն և ջեռուցում	ԳՕՍՍ 30593-2015
49.	Տրանսպորտային միջոցում օդում վնասակար նյութերի պարունակությունը	ԳՕՍՍ 33554-2015
50.	Կառավարելիությունը և կայունությունը	ԳՕՍՍ 31507-2012
51.	Վարորդի տեղից տեսանելիություն	ՄԱԿ-ի թիվ 125-00 կանոններ, ԴՕՇՏ 33988-2016
52.	Արտանետումներ	CO-85 գ/լՎտ ժ, C _m H _n -5 գ/լՎտ ժ, NO _x -17 գ/լՎտ ժ (9-ռեժիմային փորձարկման ցիկլ, Էկոլոգիական դաս 0), CO-72 գ/լՎտ ժ, C _m H _n -4 գ/լՎտ ժ, NO _x -14 գ/լՎտ ժ (9-ռեժիմային փորձարկման ցիկլ, Էկոլոգիական դաս 1), CO-55 գ/լՎտ ժ, C _m H _n -2,4 գ/լՎտ ժ, NO _x -10 գ/լՎտ ժ (ՄԱԿ N49-05 կանոններով փորձարկման ժամանակ, փորձարկման ցիկլ ESC, Էկոլոգիական դաս 2), CO-20 գ/լՎտ ժ, C _m H _n -1,1 գ/լՎտ ժ, NO _x -7 գ/լՎտ ժ (ՄԱԿ N49-05 կանոններով փորձարկման ժամանակ, փորձարկման ցիկլ ESC, Էկոլոգիական դաս 3), CO-4 գ/լՎտ ժ, C _m H _n -0,55 գ/լՎտ ժ, NO _x -2 գ/լՎտ ժ (ՄԱԿ N49-05 կանոններով փորձարկման ժամանակ, փորձարկման ցիկլ ESC, Էկոլոգիական դաս 4)
53.	Պետական գրանցումների նշանների տեղադրում	Տեխնիկական կանոնակարգի N 7 հավելվածի 4-րդ կետ
54.	Տրանսպորտային միջոցներ՝ Մակնշում	ԳՕՍՍ 33990-2016

Ծանոթագրություն

- Տրանսպորտային միջոցների տեխնիկական պահանջները (այսուհետ՝ պահանջներ) կիրառվում են կիրառման ոլորտին համապատասխան և ՄԱԿ-ի կանոններում սահմանված անցումային դրույթները հաշվի առնելով:
- Պահանջների ներկայացման ժամանակ կիրառվում են «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՍ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի N 2 հավելվածի նշումները:
- Եթե որպես հավաստող նյութեր ըստ պահանջի ներկայացվել է տրանսպորտային միջոցի տիպի ՄԱԿ-ի կանոններով պաշտոնական հաստատման մասին հաղորդագրությունը, ապա առանձին տիպերի բաղադրիչների պաշտոնական հաստատման մասին հաղորդագրությունների պատճենների ներկայացումը պարտադիր չէ:
- Հատուկ և մասնագիտացված տրանսպորտային միջոցների հանդեպ լրացուցիչ գնահատվում է «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՍ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի N 6 հավելվածի պահանջների կատարումը:

Ձև N 2

ՑԱՆԿ

ԵԶԱԿԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ

NN ը/կ	Տեխնիկական պահանջները կամ կանոնակարգման օբյեկտները	Փաստաթղթեր, որոնցում ներառված են տեխնիկական պահանջները
1.	Չարտոնված օգտագործումից տրանսպորտային միջոցների պաշտպանությունը	ՄԱԿ Կանոններ N 18-02 «Ավտոտրանսպորտային միջոցների պաշտոնական հաստատման միասնական կարգադրություններ՝ չարտոնված օգտագործումից դրանց պաշտպանության տեսանկյունից» (կետեր 5.1-5.3, 5.5, 5.12)

2.	Զեռուցման համակարգեր	Մաքսային միության «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության» տեխնիկական կանոնակարգի հավելված N 4 (կետ 1.2.1)
3.	Լուսավորման և լուսային ազդանշանային սարքավորումներով համալրվածություն	Մաքսային միության «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության» տեխնիկական կանոնակարգի հավելված N 4 (կետ 1.3.1, 1.3.2)
4.	Արգելափակման համակարգերի արդյունավետություն	Մաքսային միության «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության» տեխնիկական կանոնակարգի հավելված N 4 (կետ 2.1, ենթակետեր 2.1.1.1-2.1.1.3)
5.	Անվադողերով սարքավորվածություն	Մաքսային միության «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության» տեխնիկական կանոնակարգի հավելված N 4 (կետ 2.2)
6.	Վարորդի տեղից տեսանելիություն	Մաքսային միության «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության» տեխնիկական կանոնակարգի հավելված N 4 (կետ 2.3)
7.	Անուղղակի տեսադաշտի սարքավորումների առկայություն	ՄԱԿ Կանոններ N 46-02 «Անուղղակի տեսադաշտի սարքավորումների և դրանց տեղադրման տեսանկյունից մեխանիկական տրանսպորտային միջոցների պաշտոնական հաստատման միասնական կարգադրություններ» (կետ 15.2.1)
8.	Արագության չափման մեխանիզմներ	Մաքսային միության «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության» տեխնիկական կանոնակարգի հավելված N 4 (կետ 2.4.1)
9.	Ղեկային կառավարման վնասվածքային անվտանգություն	Մաքսային միության «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության» տեխնիկական կանոնակարգի հավելված N 4 (կետ 3.1)
10.	Տրանսպորտային միջոցների համալրվածությունը ամրակապման միջոցներով և դրանց ամրակցման կետերը	Մաքսային միության «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության» տեխնիկական կանոնակարգի հավելված N 4 (կետ 3.2.2)
11.	Նստատեղերն ու դրանց ամրանները	Մաքսային միության «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության» տեխնիկական կանոնակարգի հավելված N 4 (կետ 3.3)
12.	Տրանսպորտային միջոցների ներքին սարքավորումների վնասվածքային անվտանգությունը	Մաքսային միության «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության» տեխնիկական կանոնակարգի հավելված N 4 (կետ 3.4.1)
13.	Դռներ, փականներ և դռների ծխնիններ	Մաքսային միության «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության» տեխնիկական կանոնակարգի հավելված N 4 (կետ 3.5.1)
14.	Հրդեհային անվտանգություն	Մաքսային միության «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության» տեխնիկական կանոնակարգի հավելված N 4 (կետ 3.8)
15.	Պետական գրանցման նշանի տեղադրման հնարավորություն	Մաքսային միության «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության» տեխնիկական կանոնակարգի հավելված N 7 (կետ 4)
16.	Արտանետումներ	ՄԱԿ Կանոններ N 49-05

**Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավարի տեղակալ**

Բ. Բաղայան

06.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
դեկտեմբերի 1-ի N 1872-Ն որոշման

ՁեՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՏԻՊԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համարը _____

Գործողության ժամկետը _____-ից մինչև _____

ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄԻՆ (ամբողջական և կրճատ անվանումը, հասցեն, համարը, հավատարմագրման վկայագրի գործողության ժամկետի ավարտը)

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ՄԱԿԼԻՇ	
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄ	
ՏԻՊ	
ԲԱԶՄԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ (ԱՄՐԱՇՐՋԱՆԱԿ)	(միայն այլ արտադրողի բազային տրանսպորտային միջոցը (ամրաշրջանակը) օգտագործելու դեպքում)
ՍՈՂԻՖԻԿԱՑԻՄԱՆԵՐ	
ԿԱՏԵԳՈՐԻԱ	
ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍ	
ՀԱՅՏԱՏՈՒՆ ԵՎ ՆՐԱ ՀԱՍՑԵՆ	
ԱՐՏԱԴՐՈՂԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՍՑԵՆ	
ՀԱՎԱՔՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՍՑԵՆ	

Տրանսպորտային միջոցը համապատասխանում է սույն կանոնների N 1 հավելվածով սահմանված տեխնիկական պահանջներին:

Տրանսպորտային միջոցի տիպի գնահատման մասին եզրակացության գործողությունը տարածվում է սերիական արտադրանքի (տրանսպորտային միջոցի խմբաբանակի) վրա՝ _____ հատ քանակով, նույնականացման համարներով (VIN) _____-ից մինչև _____-ը:

Տրանսպորտային միջոցի տիպի գնահատման մասին եզրակացությունն առանց հավելվածների անվավեր է՝

հավելված N 1 «Տրանսպորտային միջոցի ընդհանուր բնութագրերը»,

հավելված N 2 «Տրանսպորտային միջոցի տիպի գնահատման մասին եզրակացությունն ձևակերպելու համար հիմք հանդիսացած փաստաթղթերի ցանկը»,

հավելված N 3 «Տրանսպորտային միջոցի մակնշման նկարագրությունը»,

հավելված N 4 «Տրանսպորտային միջոցի ընդհանուր տեսակը» (— էջ):

Լրացուցիչ տեղեկատվություն _____

(անհրաժեշտության դեպքում կատարվում է գրառում ընդհանուր նշանակության ճանապարհներով տրանսպորտային միջոցի տեղաշարժման համար հատուկ թույլտվության ձևակերպման պարտադիր լինելու մասին, նշվում են ընդհանուր օգտագործման ճանապարհներին օգտագործելու հնարավորության, առևտրային ուղևորափոխադրումների համար օգտագործելու հնարավորության և այլնի վերաբերյալ սահմանափակումները)

**Մերտիֆիկացման
ղեկավար**

մարմնի

ստորագրությունը

անունը, ազգանունը

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՏԻՊԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԷՄ

**«Մտանդարտացման և
չափազիտության ազգային
մարմին» ՓԲԸ-ի տնօրեն**

ստորագրությունը

ստորագրությունը

**Հավելված N 1
տրանսպորտային միջոցի տիպի
գնահատման մասին եզրակացության**

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Անվային բանաձևը / տանող անիվները

Տրանսպորտային միջոցի հորինվածքի սխեման

Շարժիչի տեղակայվածությունը

Թափքի տիպը / դռների քանակը

Նշանակությունը (միայն հատուկ և մասնագիտացված տրանսպորտային միջոցների համար)

Նստելատեղերի քանակը (շարքերի բաշխմամբ)

Հիփրիդային տրանսպորտային միջոցի նկարագիրը. նախատեսված է կամ նախատեսված չէ լրավիցքավորում արտաքին աղբյուրից, աշխատանքի նախատեսված ռեժիմները (թվարկել)՝ միայն ներքին այրման շարժիչ, միայն էլեկտրաշարժիչ, համատեղված (աշխատանքի այդ ռեժիմի կրճատ նկարագրություն)

<p>Ներքին այրման շարժիչ (մակնիշտ, տիպը) - գլանների թիվը և դասավորությունը - գլանների աշխատանքային ծավալը, սմ³ - սեղմման աստիճանը - առավելագույն հզորությունը, կՎտ (p-1), - առավելագույն պտտող մոմենտը, Ն-մ (p-1) Վառելիքը</p>	<p>(նշել չափման մեթոդը)</p>

<p>Մնուցման համակարգ (տիպը) Կարբյուրատոր (տիպը, մակնշվածքը) Կառավարման բլոկ (մակնշվածքը) Բարձր ճնշման վառելիքային պոմպ (տիպը, մակնշվածքը) Բոցամուղեր (տիպը, մակնշվածքը) Օդամղիչ (տիպը, մակնշվածքը) Օդի գտիչ (տիպը, մակնշվածքը) Ներթողման աղմուկի խլացուցիչներ (մակնշվածքը) - 1-ին աստիճան - 2-րդ աստիճան - 3-րդ աստիճան</p>	
<p>Վառքի համակարգ (տիպը) Բաշխիչ (մակնշման) Կոմուտատոր (մակնշման) Վառքի կոճ (մոդուլ) (մակնշվածքը) Մումեր (մակնշվում)</p>	
<p>Բանաձ գազերի արտաթողման և չեզոքացման համակարգ Չեզոքարարներ (մակնշվածքը) - 1-ին աստիճան - 2-րդ աստիճան Խլացուցիչներ (մակնշվածքը) - 1-ին աստիճան - 2-րդ աստիճան - 3-րդ աստիճան Պինդ մասնիկների գտիչ</p>	
<p>Էլեկտրամոբիլի էլեկտրաշարժիչ (մակնիշը, տիպը) Աշխատանքային լարումը, Վ Առավելագույն 30 րոպեական հզորությունը, կՎտ</p>	<p>(հաստատուն կամ փոփոխական հոսանքի, փոփոխական հոսանքի դեպքում՝ սինխրոն կամ ասինխրոն, ֆազերի քանակը)</p>
<p>Էներգիայի կուտակման սարք Մարտկոց (մակնիշը, տիպը) Էլեկտրաքիմիական գույգ Տարրերի քանակը Չանգվածը, կգ Աշխատանքային լարումը, Վ Տարողությունը, Ա-ժ Տեղակայման վայրը Կոնդենսատոր (մակնիշը, տիպը) Էներգատարությունը, Ջ Թափանիվ / գեներատոր (մակնիշը, տիպը)</p>	<p>(միայն էլեկտրամոբիլների և հիբրիդային տրանսպորտային միջոցների համար) (մարտկոց, կոնդենսատոր, թափանիվ / գեներատոր)</p>

<p>Փոխհաղորդակ Էլեկտրամեքենա (մակնիշը, տիպը) Աշխատանքային լարումը, ՎՄ Առավելագույն 30 րոպեական հզորությունը, կՎտ Կցորդիչ (մակնիշը, տիպը) Փոխանցման տուփ (մակնիշը, տիպը) փոխանցումների թիվը և փոխանցիչ թվերը Բաշխիչ տուփ (տիպը) փոխանցումների թիվը և փոխանցիչ թվերը Գլխավոր փոխանցիչ (տիպը) - փոխանցիչ թիվը</p>	<p>(փոխհաղորդակի սխեմայի տիպը և նկարագրությունը) (յուրաքանչյուր էլեկտրամեքենայի նկարագրությունը՝ հիմնական գործառնությունը (շարժիչ կամ գեներատոր), հաստատուն կամ փոփոխական հոսանքի, փոփոխական հոսանքի դեպքում՝ սինխրոն կամ ասինխրոն, ֆազերի քանակը)</p>
<p>Կախոց Առջևի (նկարագրությունը) Հետևի (նկարագրությունը)</p>	
<p>Ղեկային կառավարում (նկարագրությունը) - ղեկային մեխանիզմ (տիպը)</p>	
<p>Արգելակային համակարգեր Աշխատանքային (նկարագրությունը) Պահեստային (նկարագրությունը) Կայանային (նկարագրությունը) Լրացուցիչ (նկարագրությունը)</p>	
<p>Դռոցեր - չափսի նշագրում - կրող կարողության ինդեքսը թույլատրելի առավելագույն բեռնվածքի համար - արագության կատեգորիայի նշագրում</p>	
<p>Տրանսպորտային միջոցի սարքավորումներ</p>	<p>(օդորակիչ, դռների կողպեքների էլեկտրաբլոկավորում, թաղիոսարքավորումներ, ալեհավաք)</p>

Սերտիֆիկացման
 դեկավար

մարմնի

ստորագրությունը

անունը, ազգանունը

Ծանոթագրություն.

Բաղադրիչների մակնշման մասին տեղեկությունները կարող են չնշվել սույն հավելվածում, եթե դրանք չկան առանձին պահանջներով ապացուցողական նյութերում:

Հավելված N 2
 տրանսպորտային միջոցի տիպի
 գնահատման մասին եզրակացության

ՑԱՆԿ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՏԻՊԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԶԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

Տեխնիկական կանոնակարգման օբյեկտների էլեմենտներ, որոնց նկատմամբ սահմանված են անվտանգության պահանջներ	Համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի անվանումը և ծագումը	Փաստաթղթի համարը և ամսաթիվը*
---	---	------------------------------

**Սերտիֆիկացման
ղեկավար**

մարմնի

ստորագրությունը

անունը, ազգանունը

*Գործողության սահմանափակ ժամկետով ձևակերպված փաստաթղթերի համար նշվում են գործողության սկզբի և ավարտի ժամկետները

ՄԱԿ-ի թիվ 30 և 54 կանոնների համար սույն ցանկում բերվում է հետևյալ ծանոթագրությունը՝ «Թույլատրվում է այն դողերի տեղադրումը, որոնք համապատասխանում են չափայնության, բեռնվածքի նվազագույն թույլատրելի ինդեքսի, նվազագույն արագային կատեգորիայի չափանիշներին և ունեն համապատասխանությունը հաստատող այլ փաստաթղթեր (եթե դողերի վրա առկա է մակնշվածք՝ ըստ ՄԱԿ-ի թիվ 30 կամ 54 կանոնների, նշված մակնշվածքի մասին տեղեկատվությունը սերտիֆիկացման մարմին ներկայացնելու պայմանով)»:

2| Փաստաթղթերի ցանկում թույլատրվում է չնշել տիպի պաշտոնական հաստատման մասին հաղորդագրության համարն ըստ անվտանգության առանձին գոտիների, ձայնային ազդանշանային սարքերի, ապակիների, հայելիների և կցորդման սարքվածքների այն դեպքում, երբ առկա է նշված բաղադրիչների ցանկը՝ այդ հաղորդագրությունների համարների և ՄԱԿ-ի թիվ 16, 28, 43, 46 և 55 կանոններում համապատասխանաբար անվտանգության գոտիների, ձայնային ազդանշանային սարքերի, ապակիների, հայելիների և կցորդման սարքվածքների տեղակայման մասին հաղորդագրություններում դրանց մակնշվածքի նշմամբ:»:

Հավելված N 3
տրանսպորտային միջոցի տիպի
գնահատման մասին եզրակացության

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՑԻՆ ՄԻՋՈՑԻ ՄԱԿՆՇՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Արտադրողի ցուցատախտակի զետեղման վայրը
2. Նույնականացման համարի զետեղման վայրը
3. Տրանսպորտային միջոցների նույնականացման համարի (համարների) կառուցվածքը և բովանդակությունը|

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17

**Սերտիֆիկացման
ղեկավար**

մարմնի

ստորագրությունը

անունը, ազգանունը

**Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավարի տեղակալ**

Բ. Բադալյան

06.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2022 թվականի
դեկտեմբերի 1-ի N 1872-Ն որոշման

ՁԵՎ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԱՍՐԱՇՐՋԱՆԱԿԻ ՏԻՊԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ

Համարը _____

Գործողության ժամկետը _____ -ից մինչև _____

ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄԻՆ (ամբողջական և կրճատ անվանումը, հասցեն, համարը, հավաստարձագրման վկայագրի գործողության ժամկետի ավարտը)

ԱՍՐԱՇՐՋԱՆԱԿ

ՄԱԿՆԻՇ	
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄ	
ՏԻՊ	
ՄՈՂԻՖԻԿԱՑԻԱՆԵՐ	
ԿԱՏԵԳՈՐԻԱ	
ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍ	
ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ (նշել թվարկվածներից՝ խցիկով և շարժիչով ամրաշրջանակ, ավտոբուսային ամրաշրջանակ առանց թափքի՝ շրջանակավոր կառուցվածքի ավտոբուսների համար, ավտոբուսային ամրաշրջանակ՝ առանց թափքի՝ հիմնականախաբային կառուցվածքի ավտոբուսների համար, բեռնային ամրաշրջանակ՝ առանց խցիկի՝ հատուկ խցիկով տրանսպորտային միջոցներ պատրաստելու համար, բեռնային ամրաշրջանակ՝ մասամբ հավաքված խցիկով (առանց հետնի պատի), խցիկի առջևի մասով ամրաշրջանակ՝ որպես տուն ծառայող ավտոմեքենաներ պատրաստելու համար, առջևի մասն առանց խցիկի ամրաշրջանակ՝ որպես տուն ծառայող ավտոմեքենաներ պատրաստելու համար, կցորդի ամրաշրջանակ)	
ՀԱՅՏԱՏՈՒՆ ԵՎ ՆՐԱ ՀԱՍՑԵՆ	
ԱՐՏԱԴՐՈՂԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՍՑԵՆ	
ՀԱՎԱՔՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՍՑԵՆ	

Ամրաշրջանակը համապատասխանում է սույն կանոնների N 1 հավելվածով սահմանված տեխնիկական պահանջներին՝ սույն եզրակացության N 2 հավելվածում նշված փաստաթղթերով:

Ամրաշրջանակի տիպի գնահատման մասին եզրակացության գործողությունը տարածվում է սերիական արտադրանքի (անավարտ տրանսպորտային միջոցների (ամրաշրջանակների) խմբաքանակի) վրա ---- հատ քանակով, նույնականացման համարներով (VIN) -ից մինչև _ -ը:

Ամրաշրջանակի տիպի գնահատման մասին եզրակացությունն առանց հավելվածների անվավեր է!

հավելված N 1 «Ամրաշրջանակի ընդհանուր բնութագրերը»,

հավելված N 2 «Ամրաշրջանակի տիպի գնահատման մասին եզրակացություն ձևակերպելու համար հիմք հանդիսացած փաստաթղթերի ցանկը»,

հավելված N 3 «Ամրաշրջանակի մակնշման նկարագրությունը»,

հավելված N 4 «Ամրաշրջանակի ընդհանուր տեսակը» (———— էջ):

Լրացուցիչ տեղեկատվություն _____

(անհրաժեշտության դեպքում նշվում են սեփական ընթացքով տեղաշարժվելու արգելանքի, ընդհանուր օգտագործման փողոցներում օգտագործելու հնարավորության վերաբերյալ սահմանափակումները և այլն)

**Սերտիֆիկացման
ղեկավար**

մարմնի _____
ստորագրությունը

անունը, ազգանունը

ԱՄՐԱՇՐՋԱՆԱԿԻ ՏԻՊԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԷՄ

**«Ստանդարտացման և
չափազիտության ազգային
մարմին» ՓԲԸ-ի տնօրեն**

ստորագրությունը

անունը, ազգանունը

**Հավելված N 1
Ամրաշրջանակի տիպի
գնահատման մասին եզրակացության**

ԱՄՐԱՇՐՋԱՆԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Անվային բանաձևը / տանող անիվները _____

Տրանսպորտային միջոցի հորինվածքի սխեման _____

Շարժիչի տեղակայվածությունը _____

Թափքի տիպը / դռների քանակը _____

Նշանակությունը (միայն հատուկ և մասնագիտացված տրանսպորտային միջոցների համար)

Նստեկատեղերի քանակը (շարքերի բաշխմամբ)

Հիբրիդային տրանսպորտային միջոցի նկարագիրը, նախատեսված է կամ նախատեսված չէ լրավիցքավորում արտաքին աղբյուրից, աշխատանքի նախատեսված ռեժիմները (թվարկել)՝ միայն ներքին այրման շարժիչ, միայն էլեկտրաշարժիչ, համատեղված (աշխատանքի այդ ռեժիմի կրճատ նկարագրություն)

<p>Ներքին այրման շարժիչ (մակնիշը, տիպը) - գլանների թիվը և դասավորությունը - գլանների աշխատանքային ծավալը, սմ³ - սեղմման աստիճանը - առավելագույն հզորությունը, կՎտ (ը-1), - առավելագույն պտտող մոմենտը, Ն-մ (ը-1) Վառելիքը</p>	<p>(նշել չափման մեթոդը)</p>
<p>Մնուցման համակարգ (տիպը) Կարբյուրատոր (տիպը, մակնշվածքը) Կառավարման բլոկ (մակնշվածքը) Բարձր ճնշման վառելիքային պոմպ (տիպը, մակնշվածքը) Բոցամուղեր (տիպը, մակնշվածքը) Օդամղիչ (տիպը, մակնշվածքը) Օդի գոծիչ (տիպը, մակնշվածքը) Ներթողման աղմուկի խլացուցիչներ (մակնշվածքը) - 1-ին աստիճան - 2-րդ աստիճան - 3-րդ աստիճան</p>	
<p>Վառքի համակարգ (տիպը) Բաշխիչ (մակնշման) Կոմուտատոր (մակնշման) Վառքի կոճ (մոդուլ) (մակնշվածքը) Մոմեր (մակնշվում)</p>	
<p>Բանաձգ գազերի արտաթողման և չեզոքացման համակարգ Չեզոքարարներ (մակնշվածքը) - 1-ին աստիճան - 2-րդ աստիճան Խլացուցիչներ (մակնշվածքը) - 1-ին աստիճան - 2-րդ աստիճան - 3-րդ աստիճան Պինդ մասնիկների գոծիչ</p>	
<p>Էլեկտրամոբիլի էլեկտրաշարժիչ (մակնիշը, տիպը) Աշխատանքային լարումը, Վ Առավելագույն 30 բույեական հզորությունը, կՎտ</p>	<p>(հաստատուն կամ փոփոխական հոսանքի, փոփոխական հոսանքի դեպքում՝ սինխրոն կամ ասինխրոն, ֆազերի քանակը)</p>

<p>Էներգիայի կուտակման սարք Մարտկոց (մակնիշը, տիպը) Էլեկտրաքիմիական գույգ Տարրերի քանակը Ջանգվածը, կգ, Աշխատանքային լարումը, Վ, Տարողությունը, Ա-ժ Տեղակայման վայրը Կոնդենսատոր (մակնիշը, տիպը) Էներգատարությունը, Ջ Թափանիվ / զեներատոր (մակնիշը, տիպը)</p>	<p>(միայն էլեկտրամոբիլների և հիբրիդային տրանսպորտային միջոցների համար) (մարտկոց, կոնդենսատոր, թափանիվ / զեներատոր)</p>
<p>Փոխհաղորդակ Էլեկտրամեքենա (մակնիշը, տիպը) Աշխատանքային լարումը, Վ Առավելագույն 30 րոպեական հզորությունը, կՎտ Կցորդիչ (մակնիշը, տիպը) Փոխանցման տուփ (մակնիշը, տիպը) փոխանցումների թիվը և փոխանցիչ թվերը Բաշխիչ տուփ (տիպը) փոխանցումների թիվը և փոխանցիչ թվերը Գլխավոր փոխանցիչ (տիպը) - փոխանցիչ թիվը</p>	<p>(փոխհաղորդակի սխեմայի տիպը և նկարագրությունը) (յուրաքանչյուր էլեկտրամեքենայի նկարագրությունը՝ հիմնական գործառույթը (շարժիչ կամ զեներատոր), հաստատուն կամ փոփոխական հոսանքի, փոփոխական հոսանքի դեպքում՝ սինխրոն կամ ասինխրոն, ֆազերի քանակը)</p>
<p>Կախոց Առջևի (նկարագրությունը) Հետևի (նկարագրությունը)</p>	
<p>Ղեկային կառավարում (նկարագրությունը) - ղեկային մեխանիզմ (տիպը)</p>	
<p>Արգելակային համակարգեր Աշխատանքային (նկարագրությունը) Պահեստային (նկարագրությունը) Կայանային (նկարագրությունը) Լրացուցիչ (նկարագրությունը)</p>	
<p>Դողեր - չափսի նշագրում - կրող կարողության ինդեքսը թույլատրելի առավել- լագույն բեռնվածքի համար - արագության կատեգորիայի նշագրում</p>	
<p>Տրանսպորտային միջոցի սարքավորումներ</p>	<p>(օդորակիչ, դռների կողպեքների էլեկտրաբլոկավորում, թաղիոսարքավորումներ, ալեհավաք)</p>

Սերտիֆիկացման
 ղեկավար

մարմնի _____
 ստորագրությունը

 անունը, ազգանունը

Սերտիֆիկացման
ղեկավար

մարմնի _____
ստորագրությունը

անունը, ազգանունը

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավարի տեղակալ

Բ. Բաղայան

06.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2022 թվականի
դեկտեմբերի 1-ի N 1872-Ն որոշման

ՁԵՎ

ԵԶՎԱԿԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ

Համարը _____

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ (ամբողջական և կրճատ անվանումը, հասցեն, համարը, հավատարմագրման վկայագրի գործողության ժամկետի ավարտը)

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ՄԱԿՆԻՇ	
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄ	
ՏԻՊ	
ԲԱԶՄՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ (ԱՄՐԱՇՐՋԱՆԱԿ)	(միայն այլ արտադրողի բազային տրանսպորտային միջոցը (ամրաշրջանակը) օգտագործելու դեպքում)
ՍՈՂԻՖԻԿԱՅԻՆԱՆԵՐ	
ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ (VIN)	
ԱՐՏԱԴՐՄԱՆ ՏԱՐԵԹԻՎԸ	
ԿԱՏԵԳՈՐԻԱ	
ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍ	
ՀԱՅՏԱՏՈՒՆ ԵՎ ՆՐԱ ՀԱՍՑԵՆ	
ԱՐՏԱԴՐՈՂԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՍՑԵՆ	
ՀԱՎԱՔՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՍՑԵՆ	

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Անվային բանաձևը / տանող անիվները

Տրանսպորտային միջոցի հորինվածքի սխեման

Շարժիչի տեղակայվածությունը

Թափքի տիպը / դռների քանակը

Նշանակությունը (միայն հատուկ և մասնագիտացված տրանսպորտային միջոցների համար)

Նստելատեղերի քանակը (շարքերի բաշխմամբ)

Հիբրիդային տրանսպորտային միջոցի նկարագիրը. նախատեսված է կամ նախատեսված չէ լրալիցքավորում արտաքին աղբյուրից, աշխատանքի նախատեսված ռեժիմները (թվարկել)՝ միայն ներքին այրման շարժիչ, միայն էլեկտրաշարժիչ, համատեղված (աշխատանքի այդ ռեժիմի կրճատ նկարագրություն)

<p>Ներքին այրման շարժիչ (մակնիշը, տիպը) - գլանների աշխատանքային ծավալը, սմ3 - առավելագույն հզորությունը, կՎտ (p-1), Վառելիքը</p>	<p>(նշել չափման մեթոդը)</p>
<p>Էլեկտրամոբիլի էլեկտրաշարժիչ (մակնիշը, տիպը) Աշխատանքային լարումը, Վ Առավելագույն 30 րոպեական հզորությունը, կՎտ</p>	<p>(հաստատուն կամ փոփոխական հոսանքի, փոփոխական հոսանքի դեպքում՝ սինխրոն կամ ասինխրոն, ֆազերի քանակը)</p>
<p>Էներգիայի կուտակման սարք Մարտկոց (մակնիշը, տիպը) Կոնդենսատոր (մակնիշը, տիպը) Թափանիվ / գեներատոր (մակնիշը, տիպը)</p>	<p>(միայն էլեկտրամոբիլների և հիբրիդային տրանսպորտային միջոցների համար) (մարտկոց, կոնդենսատոր, թափանիվ / գեներատոր)</p>
<p>Փոխհաղորդակ Էլեկտրամեքենա (մակնիշը, տիպը) Աշխատանքային լարումը, Վ Առավելագույն 30 րոպեական հզորությունը, կՎտ Փոխանցման տուփ (մակնիշը, տիպը)</p>	<p>(փոխհաղորդակի սխեմայի տիպը և նկարագրությունը) (յուրաքանչյուր էլեկտրամեքենայի նկարագրությունը՝ հիմնական գործառույթը (շարժիչ կամ գեներատոր), հաստատուն կամ փոփոխական հոսանքի, փոփոխական հոսանքի դեպքում՝ սինխրոն կամ ասինխրոն, ֆազերի քանակը)</p>
<p>Կախոց Առջևի (նկարագրությունը) Հետևի (նկարագրությունը)</p>	
<p>Ղեկային կառավարում (նկարագրությունը) - ղեկային մեխանիզմ (տիպը)</p>	
<p>Արգելակային համակարգեր Աշխատանքային (նկարագրությունը) Պահեստային (նկարագրությունը) Կայանային (նկարագրությունը)</p>	

Դոդեր - չափսի նշագրում - կրող կարողության ինդեքսը թույլատրելի առավելագույն բեռնվածքի համար - արագության կատեգորիայի նշագրում	
Տրանսպորտային միջոցի սարքավորումներ	(օդորակիչ, դռների կողպեքների էլեկտրաբլոկավորում, ռադիոսարքավորումներ, ալեհավաք.)

Համապատասխանում է սույն կանոններով սահմանված պահանջներին

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ընդհանուր օգտագործման ճանապարհներին առանց սահմանափակումների կամ եզրաչափերի և սոնու զանգվածների վերաբերյալ նորմատիվների գերազանցման պատճառով սահմանափակումներով օգտագործելու հնարավորություն, որպես երթուղային տրանսպորտային միջոց օգտագործելու հնարավորություն և այլն

**ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ
ՓՈՐՁԱՐԿՄԱՆ
ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐ**

ստորագրությունը

անունը, ազգանունը

**Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավարի տեղակալ**

Բ. Բադալյան

06.12.2022
ՀԱՎԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2022 թվականի
դեկտեմբերի 1-ի N 1872-Ն որոշման

ԿԱՆՈՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

		Բաժին 1
		Բաժին 2
		Բաժին 3

